1. Կնոջ տարիքը՝ 36-42 տարեկան, տղամարդու տարիքը՝ առանց սահմանափակման, բացառությամբ արհեստական սերմնավորման դեպքերից:
2. Զույգերի համար պետք է լինի առաջին երեխան:
3. Ամուսնության վկայականի առկայություն:
4. Զույգերի ամսական ընդհանուր աշխատավարձը ոչ ավել, քան 300 000 ՀՀ դրամ, առանց հարկերի:
5. Հիմնադրամի կողմից ֆինանսավորումը կատարվում է արտամարմնային բեղմնավորման խթանման փուլը սկսելուց (նախնական հետազոտությունները կատարվում են զույգի ֆինանսական միջոցներով):
6. Ծրագրին կարող են մասնակցել նաև այն զույգերը, որոնք օգտվում են դոնորական ձվաբջիջներից կամ դոնորական սերմից:
7. Զույգը չպետք է ունենա թանկարժեք սեփականություն (բնակարան, սեփական առանձնատուն, կամ հողակտոր) իր անունով: Զույգերը պետք ներկայացնեն համապատասխան տեղեկանք սեփականության վերաբերյալ՝ կադաստրից:
8. Ընտանիքի անդամների հետ, այդ թվում նաև ծնողների հետ համատեղ ընդհանուր սեփականություն ունենալու դեպքում զույգը կարող է ընդգրկվել բարեգործական ծրագրում:
9. Սեփական մեքենայի առկայության դեպքում երկուսի (կնոջ և/կամ ամուսնու) մեքենաների արժեքը միասին չպետք է գերազանցի 4000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը:
10. Եթե մեքենայի շուկայական արժեքը տատանվում է 3000-4000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սահմաններում և օգտագործվում է որպես ընտանիքի միակ ապրուստի միջոց, և զույգը համապատասխանում է մնացած չափորոշիչներով, ապա ընդգրկվում է ծրագրում:
11. Զույգը ԱՄԲ-ի համար ընտրվում է վերոնշյալ պայմանները բավարարելու, պետական պատվերում չընդգրկվելու և մասնավոր այլ կազմակերպությունների հետ՝ ֆինանսական առումով ԱՄԲ-ի համար չհամագործակցելու դեպքում: